ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԼԻԼԻԹ ԱՐՄԵՆԻ ՂԱԶԱՆՉՅԱՆԻ «ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՍԱՀՄԱՆԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ ԺԲ.00.02 - «ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ՄՈՒՆԻՑԻՊԱԼ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անձի իրավական դրության և դրա հիմնատարրերի վերաբերյալ գիտական հետազոտություններն արդիական են, քանի որ միջազգային իրավունքի սկզբունքներին համահունչ՝ ներպետական օրենսդրության առաջնային առաքելությունը դառնում է անհատի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պահպանությունն ու պաշտպանությունը, ինչպես նաև հասարակության և պետական շահերից բխող անձի պարտականությունների իրացման ապահովումը:

Հեղինակը իրավացիորեն նշում է, որ մեր երկրում անձի իրավական դրության բաղադրիչների առանձնահատկությունները մասնագիտական գրականության մեջ չեն արժանացել հատուկ վերլուծության, ինչի հետևանքով անձի իրավական դրության վերաբերյալ լիարժեք պատկերացումը բացակայում է: Հետևաբար, հեղինակը փորձել է վերացնել տվյալ բացթողումը: Ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը. «(...) Արդի ժամանակաշրջանի ներպետական մարտահրավերներից է անձի իրավական դրության երաշխավորված պաշտպանությունը, որին պետք է նպաստեն նաև առաջիկա սահմանադրական և դատաիրավական բարեփոխումները, դրանց նվիրված ռազմավարության ծրագրի իրականացումը»(ատենախոսություն, էջ 5):

Անձի իրավական դրության հիմնախնդիրների միջգիտակարգային մակարդակում հետազոտման արդյունքում՝ դոկտորանտը կարողացել է վերհանել
անձի իրավական դրության տարրերի հետ անմիջական փոխկապակցվածության մեջ գտնվող այնպիսի խնդիրներ, որոնք ծագում և զարգանում են արդի ժողովրդավարական, իրավական,սոցիալական պետությունում և որոնց կարգավորումները կարող են հիմք հանդիսանալ ոլորտում առկա խնդիրների լուծման և բարեփոխումների իրականացման համար:

Հատկանշական է, որ ատենախոսությունում հեղինակը փորձ է կատարել հանրային իրավունքի ոլորտում հետազոտության շրջանակներում վերհանել նաև անձի իրավական դրության հետ առնչվող հիմնախնդրի միջազգային-իրավական, իրավաքաղաքական, սահմանադրաիրավական, քրեաիրավական բաղկացուցիչները՝ բարձրացնելով դրանց սահմանադրականացման խնդիրները:

Հեղինակը բացահայտել է նաև անձի իրավական դրության վերաբերյալ առանձին մոտեցումների գաղափարափիլիսոփայական և պատմատեսական զարգացման հիմքերը, ընդգծել է դրանց ընդհանրությունները և

առանձնահատկությունները, դոկտրինալ կիրառական նշանակությունը պոզիտիվ իրավունքի (օրենսդրության) կատարելագործման ուղղությամբ:

Գրախոսվող աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակը հայրենական իրավագիտությունում առաջին անգամ համակողմանի և համակարգված վերլուծության է ենթարկել անձի իրավական դրության, այդ թվում՝ սահմանադրաիրավական կարգավիճակի, խնդրահարույց հարցերը՝ սահմանադրական իրավունքի տեսանկյունից, ներկայացրել է անձի իրավական դրության, վերջինիս տարրերի վերաբերյալ հեղինակային մոտեցումներ, ինչպես նաև բացահայտել է նաև անձի իրավական դրության դրսևորման առանձնահատկություն-ները իրավակարգավորման և իրավակիրառ ոլորտներում: Ավելին, հեղինակը գիտականորեն հիմնավորել և ճշգրտել է անձի իրավական (սահմանադրաիրավական) դրության տարրերի դերն ու նշանակությունը ժողովրդավարական, իրավական պետությունում, ինչպես նաև պետություն-հասարակություն-անհատ եռամիասնության ու փոխկապվածության շրջանակում բացահայտել է յուրաքանչյուրի իրավական ազատության սահմանները և միմյանց հանդեպ իրավական և բարոյական պարտականությունները:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, որոնցում ներառված են տասնութ ենթագլուխներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության ներածության մեջ հեղինակը հիմնավորել է ընտրված թեմայի արդիականությունը, թեմայի մշակվածության աստիճանը, ներկայացրել է հետազոտության տեսական, նորմատիվ-իրավական, փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների հավաստիություն ու օբյեկտիվությունը, արդյունքների փորձարկումն ու դրանց ներդրումը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը:

«Անձի իրավական դրությունը, որպես սահմանադրաիրավական գիտակարգ. մեթոդաբանական խնդիրներ» խորագրով առաջին գլուխը, բաղկացած է երեք ենթագլխից, որոնց շրջանակներում հեղինակը անդրադարձ է կատարում անձի իրավական դրության էության բացահայտման հիմնահարցին, ընդգծում անձի իրավասուբյեկտության և քաղաքացիության սահմանադրաիրավական բովանդակությունն ու տեղը անձի իրավական դրությունում: Հեղինակը նախ կարևոր անդրադարձ է կատարել գիտական ասպարեզում երկար տարիների վեճի առարկա հանդիսացող «անձի իրավական դրություն» և «անձի իրավական կարգավիճակ» եզրույթների ընդհանրություններին և տարբերություններին: Երկրորդ՝ հեղինակը շեշտադրել է անձի քաղաքացիության, որպես անձի-պետություն կապող օղակի յուրահատուկ ազդեցությանը մարդու իրավունքների, ազատությունների

պարտականություններ ձեռքբերման և իրացման առանձնահատկությունների վրա:

«Անձի իրավական դրության հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան. Քննական և իրավահամեմատական վերլուծություն» խորագրով երկրորդ գլուխը, բաղկացած է չորս ենթագլխից, որոնցում համակարգված եղանակով ներկայացվել և վերլուծվել են «անձի իրավական դրություն» հայեցակարգի զարգացման սոցիալ-իրավական հիմքերը, ներկայացվել են տվյալ հայեցակարգի առանձնահատկությունները ռուսական սահմանադրական ուսմունքներում և խորհրդային իրավական դոկտրինում: Առանձին ենթագլխով հեղինակը անդրադարձ է կատարում ազգային-իրավական համակարգի ձևավորման և անձի իրավական դրության հիմնախնդիրներին, որի շրջաններում լուսաբանվում է նորանկախ պետության իրավական համակարգի ձևավորմանը զուգընթաց՝ անձի իրավական դրության դոկտրինալ և օրենսդրական ամրագրման զարգացման գործընթացը: Հեղինակը իրավացիորեն եկել է այն եզրահանգման, որ ՀՀ-ում իրականացված սահմանադրահիրավական բարեփոխումները ամրագրեցին նոր մոտեցումներ անձի իրավական դրության տարրերի վերաբերյալ, որոնք համահունչ են միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված չափորոշիչներին:

«Անձի իրավական դրության համակարգային ամբողջականության բաղադրիչների դրսևորման առանձնահատկությունները» խորագրով երրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Քննարկվող գլխի շրջանակներում հեղինակը բազմակողմանի ուսումնասիրության է ենթարկում անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների էությունն ու դրսևորման առանձնահատկությունները, այդ հասկացությունների հետ կապված հիմնախնդիրները արդի ժողովրդական, իրավական պետությունում: Շատ կարևոր է, որ տվյալ գլխում «օրինական շահ» հասկացության հեղինակային մոտեցման ներկայացման հետ մեկտեղ, արդարացիորեն փաստվում է, որ անձի իրավունքներն ու ազատությունները միահյուսված են անձի արժանապատվության հետ և դրանց սահմանափակումը չպետք է ոտնահարի արժանապատվությունը: Միևնույն ժամանակ, ժողովրդավարական իրավական պետությունում, անձի արժանապատվությունը ճանաչվում է ոչ միայն որպես սահմանադրական կարգի հիմունք, այլև անձի սուբյեկտիվ իրավունք:

«Անձի իրավական դրության դրսևորումները, սկզբունքները և առանձնահատկությունները իրավակարգավորումների ոլորտում» խորագրով չորրորդ գլուխում, որը բաղկացած է երեք ենթագլխից, հեղինակը բարձրացնում է անձի իրավական դրության հիմնական տեսակների և սկզբունքների բովանդակային յուրահատկությունների և դրանց շրջանակներում առաջացող հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են թողնում ժողովրդավարական պետությունում անձի իրավական դրության տարրերի իրացման վրա: Ներկայացվող գլխում արդարացիորեն փաստարկվում է, որ անձի իրավաքաղաքական կարգավիճակն ապահովում է քաղաքացիական հասարակության անդամների ակ-

տիվ մասնակցությունը հանրային-քաղաքական կյանքին՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը, ինչպես նաև անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանը: Հեղինակն արդարացիորեն եզրահանգում է, որ անհրաժեշտ է իրականացնել ներպետական օրենսդրության զարգացումը երկու հիմնական ուղղություններով, որոնց դեպքում մի կողմից ստեղծվում են անձի իրավունքների պաշտպանության ուղղված նոր իրավական ինստիտուտներ, իսկ մյուս կողմից վերանայվում է պետության կենսագործունեության կարևորագույն ոլորտների կարգավորմանն ուղղված իրավական միջոցների ամբողջությունը:

«Անձի իրավական դրության սոցիալ-իրավական երաշխիքների համակարգը և դրա կատարելագործման հիմնախնդիրները արդի սահմանադրաիրավական զարգացումների տեսանկյունից» խորագրով հինգերորդ գլուխում, որը բաղկացած է չորս ենթագլխից, հեղինակը ներկայացրել է անձի իրավական դրության ընդհանուր սոցիալական և իրավաբանական երաշխիքների էությունը և նշանակությունը, դրանց բնութագրիչ հատկանիշները: Վերլուծության ենթարկելով մարդու իրավունքների պաշտպանությանն ու պահպանության ապահովումն իրականացնող հանրաճանաչ միջազգային (համընդհանուր) և տարածաշրջանային կառուցակարգերն ու կառույցների, այդ թվում՝ ՄԻԵԴ-ի գործունեության սկզբունքները, հեղինակը արդարացիորեն փաստում է, որ մարդու իրավունքների պաշտպանության տարաբնույթ հիմնախնդիրները ծագում և զարգանում նաև ՄԻԵԴ-ի ներսում, սկսած գանգատի ընդունելության, բարեկամական կարգավորումների փուլով և վերջացրած վճռի կայացման փուլով:

Ատենախոսության եզրակացություններ բաժնում դոկտորանտը ներկայացրել է հետազոտության հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները, որոնց մեծ մասն ունեն տեսական և կիրառական նշանակություն:

Հատկանշական է, որ հետազոտության տեսական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ աշխատությունում ձևակերպված տեսական և գիտագործնական դրույթները հնարավորություն են ընձեռում համապարփակ պատկերացում կազմել արդի ժողովրդավարական պետությունում անձի իրավական դրության, դրա տարրերի դասակարգման, իրացման խնդրահարույց հարցերի գիտական վերլուծություն վերաբերյալ: Ինչ վերաբերում է հետազոտության գործնական նշանակությանը, ապա պետք է նշել, որ աշխատանքում ձևակերպված դրույթները, ստացված արդյունքները, ինչպես նաև առաջարկությունները կարող են կիրառվել օրինաստեղծ գործունեությունում, (ներառյալ՝ անձի իրավական դրության բաղադրիչների վերաբերյալ օրենքի նախագծերի մշակման գործընթացում), իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման և գիտահետազոտական, գիտամանկավարժական գործունեության իրականացման ընթացքում:

Կարևորելով ատենախոսության նշանակությունը անձի իրավական դրության հիմնախնդիրների լուծման տեսանկյունից, ինչպես նաև հաշվի առնելով թեմայի բարդությունն ու բազմաշերտությունը՝ նպատակահարմար ենք համարում ներկայացնել հետազոտության վերաբերյալ հետևյալ նկատառումները.

1. Ատենախոսության 3.4. ենթագլխում, քննարկվում են քաղաքացիների հիմնական պարտականությունների տեսակները, որոնք իրենց ամրագրում են ստացել բազմաթիվ հետխորհրդային սահմանադրություններում: Հեղինակն, ի թիվս այլոց, մատնանշում է պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության պարտականությունը, սակայն չի բացահայտում տվյալ պարտականության բուն էությունը, ինչը ոչ լիարժեք է դարձնում ներկայացված պարտականությունների ցանկը:

2. Ատենախոսության 5.3. ենթագլխում հեղինակը անդրադառնալով անձի իրավական դրության ներպետական երաշխիքների համակարգի առանձնահատկություններին, ընդգծում է ՀՀ Ազգային ժողովի, որպես ներկայացուցչական մարմնի, տեղն ու դերը պետության կողմից մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում: Հեղինակը նաև անդրադառնում է ՀՀ Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության, որպես վերոնշյալ ոլորտում առավել ակտիվ մարմնի:

Կարծում ենք, ատենախոսական հետազոտությունը կշահեր, եթե հեղինակը իր աշխատանքում անդրադառնար նաև պատգամավորի, իրավական կարգավիճակին և գործունեության առանձնահատկություններին, որպես ՀՀ Ազգային ժողովի կարևոր մարմնի, որը անմիջականորեն նպաստում է անձի իրավական դրության ամրապնդմանը, մարդու իրավունքների և ազատությունների իրացմանը:

3. Աշխատանքում առկա են նաև տեխնիկական բնույթի վրիպակներ, ինչը կարծում ենք կապված է համակարգչային շարվածքի հետ (էջ 174, 288, 291, 298, 336):

Հարկ ենք համարում նշել, որ ներկայացված նկատառումները որևէ կերպ չեն նվազեցնում կատարված հետազոտության արժեքը:

Աշխատանքը նշանավորվում է հեղինակավոր և հարուստ աղբյուրներով՝ մասնագիտական և հարակից գրականությամբ, միջազգային փաստաթղթերով, նորմատիվ իրավական ակտերով, դատական պրակտիկայի նյութերով, զեկույցներով և համացանցային ռեսուրսներով: Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը: Աշխատանքը օժտված է ներքին միասնությամբ, համակարգվածությամբ, համալիրությամբ, գրված է գիտական պատշաճ լեզվով, իսկ հետազոտության եզրահանգումները տրամաբանված են և համապատասխանում են ատենախոսության ներածության մեջ դրված խնդիրներին և նպատակներին: Ատենախոսության հիմնական բովանդակությունը ներկայացված է սեղմագրում: Հատկանշական է, որ հեղինակի բազմաթիվ մենագրություններում և գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները, եզրահանգումներն ու առաջարկությունները: Այսպիսով, քննարկվող դոկտորական ատենախոսությունը հանդիսանում է արդիական, գիտական նորույթ պարունակող տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն, ամբողջական հետազոտական աշխատանք:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, Լիլիթ Արմենի Ղազանչյանի «Անձի իրավական դրության հիմնախնդիրները. Սահմանադրաիրավական հետազոտություն» վերտառությամբ դոկտորական ատենախոսությունը ամբողջությամբ համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով սահմանված ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի աստիճանի շնորհմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ,
ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍ՝ Ա.Ռ. Հարությունյան

Լ.Ա. Ղազանչյանի ատենախոսության պաշտոնական ընդդիմախոս, ի.գ.դ. Ա.Ռ. Հարությունյանի ստորագրությունը հաստատում եմ

Հայ-Ռուսական համալսարանի գիտական քարտուղար՝ Ռ.Ս. Կասաբաբովա

29.05.2026թ.